

**ԵՄ բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի և հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի
մամլո խոսնակների հայտարարությունը՝ Ռամիլ Սաֆարովի ազատման
վերաբերյալ**

Եվրոպական միության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ և Հանձնաժողովի փոխնախագահ Քեթրին Էշթոնի և Ընդլայնման և Հարևանության քաղաքականության եվրոպական հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի մամլո խոսնակներն այսօր հանդես են եկել հետևյալ հայտարարությամբ:

«Բարձր ներկայացուցիչն ու Շտեֆան Ֆյուլեն մտահոգված են, տեղեկանալով, որ Ադրբեջանի նախագահը ներում է շնորհել Ռամիլ Սաֆարովին, ով մեղադրվել և դատապարտել էր ցմահ ազատազրկման 2004թ.-ին Բուդապեշտում հայազգի սպա Գուրգեն Մարգարյանին սպանելու կապակցությամբ:

Ռամիլ Սաֆարովը, Ադրբեջանի խնդրանքով, «Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թ.-ի մարտի 21-ի Ստրասբուրգյան կոնվենցիայի շրջանակներում, ս.թ. օգոստոսի 31-ին Հունգարիայից տեղափոխվել է Ադրբեջան, պատիժը կրելու նպատակով: ԵՄ ներկայացուցիչները դիմել են համապատասխան կառույցներին և հետևելու են իրադարձությունների հետագա զարգացմանը:

Եվրոպական միության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ և հանձնաժողովի փոխնախագահ Քեթրին Էշթոնի և Ընդլայնման և հարևանության քաղաքականության եվրոպական հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն վերստին կոչ են անում Հայաստանին ու Ադրբեջանին զերձ մնալ հրապարակային հայտարարություններից, իրավիճակի վատթարացում թույլ չտալու նպատակով՝ ի շահ տարածաշրջանում կայունության հաստատման և հաշտեցմանն ուղղված ջանքերի»: